ԱՎԴ2/0093/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 հունիսի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 18-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի ապրիլի 18-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արամայիս Ռաֆիկի Խանամիրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Հովսեփ Սպարտակի Ավանեսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 44143424 (ԱՎԴ2/0093/01/25) քրեական վարույթը:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի ապրիլի 22-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունիսի 11-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 18-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 19-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2025 թվականի ապրիլի 16-ի որոշումներով Արամայիս Խանամիրյանի և Հովսեփ Ավանեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) Արամայիս Ռաֆիկի Խանամիրյանը Հովսեփ Սպարտակի Ավանեսյանի հետ խմբի կազմում նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, իրացման նպատակով Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ոմն Բենիամինից ապօրինի ձեռք են բերել և պահել առանձնապես խոշոր չափերով՝ 666,83 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, առանձնապես խոշոր չափերով՝ 236,48 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.*

Այսպես.

Արամայիս Ռաֆիկի Խանամիրյանը և Հովսեփ Սպարտակի Ավանեսյանը, առնվազն 2024 թվականի սկզբներից, «Տելեգրամ» ինտերնետային հավելվածի միջոցով, ընդգրկված լինելով ապօրինի թմրաշրջանառությանը, առնվազն 2024 թվականի մայիս ամսին, քննությամբ չպարզված հստակ օրը, Արամայիս Ռաֆիկի Խանամիրյանը և Հովսեփ Սպարտակի Ավանեսյանը, նախնական համաձայնություն են ձեռք բերել զբաղվել թմրամիջոցների վաճառքով, մասնավորապես՝ քանի որ «Տելեգրամ» ինտերնետային կայքում թմրամիջոցները ավելի թանկ արժեն, վերջիններս պայմանավորվածություն են ձեռք բերել, որպեսզի Արամայիս Խանամիրյանը, իր ծանոթ և մտերիմ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ոմն Բենիամինից, իրացման նպատակով՝ պատվիրելու և գնելու եղանակով, ապօրինի ձեռք բերի «Մարիխուանա», «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցներ, որից հետո Արամայիս Խանամիրյանը և Հովսեփ Ավանեսյանը, սակայն հիմնականում վերջինս, դրանք վաճառեն տարբեր անձանց:

Արամայիս Խանամիրյանը և Հովսեփ Ավանեսյանը, նախնական համաձայնության գալուց հետո, առնվազն 2024 թվականի մայիս ամսից սկսված, քննությամբ չպարզված հստակ օրերի, Արամայիս Խանամիրյանը Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ոմն Բենիամինից, իրացման նպատակով՝ պատվիրել է «Մարիխուանա», «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցներ: Պատվիրելուց հետո, երբ ոմն Բենիամինը ուղարկել է թմրամիջոցները և հայտնել դրանց գտնվելու վայրերը, ինչպես Արամայիս Խանամիրյանը, այնպես էլ Հովսեփ Ավանեսյանը ապօրինի ձեռք բերելով պատվիրված «Մարիխուանա», «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցները, դրանք շահադիտական դրդումներով՝ 1 գրամը 10.000 ՀՀ դրամից մինչև 40.000 ՀՀ դրամ գումարով, հիմնականում Մասիս համայնքի վարչական տարածքում՝ «Կոնտինենտալ» ռեստորանային համալիրի մոտակայքում, վաճառել են տարբեր անձանց, այդ թվում նաև Արարատ համայնքի Կոմիտասի փողոցի 20-րդ հասցեի բնակիչ Արթուր Գրիգորյանին, Երևան քաղաքի Նոր Խարբերդ բնակավայրի 8-րդ փողոցի 7-րդ հասցեի բնակիչ Վրեժ Պողոսյանին:

Արամայիս Խանամիրյանը և Հովսեփ Ավանեսյանը, տևական ժամանակահատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացմամբ, գործելով խմբի կազմում նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, երբ նկարագրված թմրաշրջանառության արդյունքում վաճառել են իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված թմրամիջոցները, 2024 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, քննությամբ չպարզված հստակ օրը, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ոմն Բենիամինից, Արամայիս Խանամիրյանը իրացման նպատակով պատվիրել է թմրամիջոցի նոր խմբաքանակ, այն է՝ «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ, ոմն Բենիամինից պատվիրելու, գնելու եղանակով, ապօրինի ձեռք է բերել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին ընդունված N 707-ն որոշման 1-ին հավելվածի 110-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող, առանձնապես խոշոր չափերով՝ 236,48 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, նույն որոշման 1-ին հավելվածի 81-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող, առանձնապես խոշոր չափերով՝ 666,83 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որոնք իրացման նպատակով, գրեթե համեմատաբար հավասար քաշերով փաթեթավորել են 64 տարբեր փաթեթներում:

2024 թվականի նոյեմբեր ամսվա սկզբներին, Արամայիս Խանամիրյանը, իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված, ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին ընդունված N 707-ն որոշման 1-ին հավելվածի 110-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող, առանձնապես խոշոր չափերով՝ 236,48 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցից, 2,42 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը, թվով 3 փաթեթներում փաթեթավորված

վիճակում, Մասիս համայնքի վարչական տարածքում՝ «Կոնտինենտալ» ռեստորանային համալիրի մոտակայքում, իր գործընկեր Հովսեփ Ավանեսյանի կողմից այլ երրորդ անձի վաճառելու նպատակով փոխանցել է, իրացրել է, վերջինիս, որն էլ 2024 թվականի նոյեմբերի 5-ին հայտնաբերվել և վերցվել է Հովսեփ Ավանեսյանի անձնական խուզարկությամբ, իսկ մնացած առանձնապես խոշոր չափերով՝ 666,83 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը, առանձնապես խոշոր չափերով՝ 234,83 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը, թվով 61 փաթեթներում փաթեթավորված վիճակում, Արամայիս Խանամիրյանը և Հովսեփ Ավանեսյանը, իրացման նպատակով ապօրինի պահել են Մասիս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի ավտոմայրուղի 1-ին հասցեում գործող «Կոնտինենտալ» հյուրանոցային և ռեստորանային համալիրի «Պապու օջախ» կոչվող սրահում, որն էլ հայտնաբերվել և վերցվել է նույն վայրից՝ 2024 թվականի նոյեմբերի 7-ին: (…)»[1]:

7. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունիսի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների ընդհանուր թիվը ինն է, որոնցից միայն երկուսն են բնակվում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Հակառակ դրան՝ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ առնվազն հինգը, բնակվում են առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Մասնավորապես՝ մեղադրյալներ Ա.Խանամիրյանի, Հ.Ավանեսյանի, վկաներ Լ.Կարապետյանի, Յ.Եղիազարյանի և Վ.Պողոսյանի բնակության վայրն է Երևան քաղաքը: Ընդ որում, պաշտպան Ա.Թումասյանի բնակության վայրը ևս Երևան քաղաքն է, սակայն հաշվի առնելով, որ վերջինս, որպես հանրային պաշտպան, գործունեություն է ծավալում Արարատի մարզում, Դատարանը նրան չի ներառել Երևան քաղաքում բնակվող՝ վարույթի մասնավոր մասնակիցների վերաբերյալ իրականացված հաշվարկում:*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 95-97, 98-100:

Վերը շարադրված փաստական հանգամանքը վերլուծելով մեջբերված իրավանորմերի լույսի ներքո, ինչպես նաև հիմք ընդունելով մեղադրյալների համաձայնությունը, արդարադատության շահը և գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջը, Դատարանն արձանագրում է, որ թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթը պետք է ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ինչ վերաբերում է մեղադրյալներ Ա.Խանամիրյանի և Հ.Ավանեսյանի՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվելու վերաբերյալ հանրային մեղադրողի դատողություններին, ապա Դատարանը փաստում է, որ թեև մեղադրյալները ներկայումս գտնվում են կալանքի տակ, սակայն թե՛ համապատասխան քրեակատարողական հիմնարկը և թե՛ կիրառված խափանման միջոցը վարույթի ընթացքում կարող են փոփոխվել, ուստի այդ հանգամանքը, Դատարանի համոզմամբ, վարույթի ընդդատության հարցի լուծման տեսանկյունից որոշիչ դեր ունենալ չի կարող: (…)»[2]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 18-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն որոշման իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման հիմքում դրված հանգամանքները՝ հարկ է ընդգծել, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշում կայացնելիս դրսևորել է ձևական մոտեցում՝ բավարարվելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի վկայակոչմամբ:*

Մինչդեռ, քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ դատակոչված անձանցից մեղադրյալներ Արամայիս Խանամիրյանը և Հովսեփ Ավանեսյանը գտնվում են կալանքի տակ և պահվում են ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկում:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 76-78:

Վկաներից Ջաոա Վարոսյանը և Արթուր Գրիգորյանը բնակվում են Արարատի մարզում, իսկ Լևոն Կարապետյանը, Յուրի Եղիազարյանը և Վրեժ Պողոսյանը բնակվում են Երևան քաղաքում:

Արամայիս Խանամիրյանի պաշտպան Վ.Եփրիկյանը բնակվում է Կոտայքի մարզում, իսկ Հովսեփ Ավանեսյանի պաշտպան Գ.Մխիթարյանը հանդիսանում է հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան և գործունեություն է իրականացնում Արարատի մարզում:

Այլ խոսքով՝ սույն վարույթով դատակոչված թվով ինը մասնավոր մասնակիցներից և վկաներից միայն երեք վկաներն են բնակվում Երևան քաղաքի վարչական տարածքում:

Բացի այդ, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել նաև, թե նշված հայեցողական լիազորության գործադրումը և քրեական վարույթի տարածքային ընդդատության փոփոխությունն արդարադատության շահի տեսանկյունից ինչով է անհրաժեշտ:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու՝ վերը նշված նախապայմանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջից: Նման որոշման կայացումը չի կարող դիտվել իրավաչափ՝ հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթով բացակայում է գործի տարածքային ընդդատությունը փոխելու բացառիկ հիմքը, այն է՝ քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական և իրավական բնույթի բարդություններն ու խնդիրները բացառելու և պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից ելնելով վարույթը ենթադրյալ հանցանքի կատարման վայրից այլ տարածքի դատարան ուղարկելու անհրաժեշտությունը: (…)»[3]*:*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 88-94:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

14.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից:

Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- վարույթին ներգրավված են թվով ինը մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից մեղադրյալներ Ա.Խանամիրյանի և Հ.Ավանեսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը, և վերջիններս գտնվում են ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում[7], վկաներ Ջ.Վարոսյանի և Ա.Գրիգորյանի բնակության[8] և պաշտպան Ա.Թումասյանի գործունեության[9] վայրն է՝ Արարատի մարզը, վկաներ Լ.Կարապետյանի, Յ.Եղիազարյանի և Վ.Պողոսյանի բնակության վայրն է՝ Երևան քաղաքը, իսկ պաշտպան Վ.Եփրիկյանի բնակության վայրն է՝ Կոտայքի մարզը[10]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իր համաձայնությունն են հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ[11], որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[12]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մեղադրյալները գտնվում են կալանքի տակ և պահվում են ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, գտել է, որ վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից միայն երեքն են բնակվում Երևան քաղաքում, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 33, 43, 80:
[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 157-158:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, դատական նիստի արձանագրություն, թերթեր 70-74:
[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 157-158:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, դատական նիստի արձանագրություն, թերթեր 70-74:
[12] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է նաև, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել, թե նշված հայեցողական լիազորության գործադրումը և քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը արդարադատության շահի տեսանկյունից ինչով է անհրաժեշտ[13]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, **երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի** ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը**,** ինչպես նաև քրեական **վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից**: Սույն վարույթի փաստական հանգամանքների գնահատմամբ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հիմնավոր է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, **դրսևորելով խիստ ձևական մոտեցում**, վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում:

---

[13] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի վերոգրյալ դիրքորոշումը ի թիվս այլնի, հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ սույն վարույթով քննությունն իրականացվում է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Մասիսի նստավայրում:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ2/0093/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ